

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Վարդանաշեն համայնքի ղեկավարի 2014թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ :*

2014 թվականի հուլիսի 16-ին ժամը 15<sup>00</sup>- ին Վարդանաշենի ակումբի շենքում տեղի ունեցավ Վարդանաշեն համայնքի ղեկավար Արթուր Մանուկյանի 2014թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը, համայնքի ավագանու և համայնքի քննաչության առջև :

Ներկա էր Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցալտնտեսական զարգացման վարչության նախագահ Վարդադատ Մկրտչյանը : Ներկա էին ավագանու երեք անդամներ և համայնքի 54 անդամներ :

2014 թվականի առաջին կիսամյակում Վարդանաշենի գյուղապետարան է մուտքագրվել 110 գրություն և դուրս է եկել 85 գրություն :

Համայնքի ղեկավարի մոտ 2014թվ ականի առաջին կիսամյակում կատարվել է 25 քաղաքացիների հարցումներ :

Ավագանու երեք նիստ է անցկացվել և կայացվել է ավագանու 16 որոշում , իսկ համայնքի ղեկավարի 15 որոշում է կայացվել և արձակվել է 1 կարգադրություն :

2014թվականի առաջին կիսամյակում Վարդանաշեն համայնքում կա 98,0 հա ցորենի և գարու ցանքս, առվույտի մաքուր ցանքս 28,0 հա-ի վրա , առվույտի հին ցանք 101,0 հա-ի վրա, բանջարեղեն խառը 62,0 հա , պարենային բուստան 133,0 հա :

Սեփական 427,0 հա վարձակալական 56 ընդ 2014թ համայնքում կատարվել են ցանքսեր 483,0հա օձակվող հողեր սեփական 0,5 հա , 2014թվականին առաջին կիսամյակում կատարվել է համայնքի խողոցների հարթեցում և նույն աշխատանքը կատարվել է համայնքի դաշտամիջյան անապարհների վրա :

2014թվականի առաջին կիսամյակում Վարդանաշենի գյուղապետարանը աշխատավարձի պարտքեր չունի :

2014թվականի առաջին կիսամյակում հողի հարկի տարեկան նախատեսված 6150,0 հազ. դրամի դիմաց գանձվել է 107,0 հազ. դրամ , գույքահարկի 100, 0 հազ. դրամի դիմաց գանձվել է 100,0 հազ. դրամ , Վարձակալական հողերի վարձավճարներ 650,0 հազ. դրամ :

2014թվականի ապրիլ ամսին համայնքում տեղադրվեցին ևս 4 /չորս/ հակակարկտային կայաններ, որոնց ընդհանուր թիվը եղավ 8 /ութ/ :

Դոտացիայի 16738,4 հազ. դրամի դիմաց մուտք է եղել 8369,2 հազ. դրամ :

Վերը նշված հարկատեսակների գանձումները հասկանալի պատճառներով չեն կատարվել , սակայն ես խոստանում եմ , որ երկրորդ կիսամյակին համայնքի բյուջեով նախատեսված եկամուտների հավաքագրումը կկատարվի ամբողջովին :

2014թվականի հունիս ամսին վճարվել է գյուղապետարանի էլ էներգիայի վարձ 599,0 հազ. դրամ , Եմեղաջրի էլ . էներգիայի վարձ 700,0 հազ. դրամ , գրասենյակային նյութերի 200,0 հազ. դրամ ,

տեղաբնակային միջոցառումներ՝ որից վերջին գանգ 160,0 հազ. դրամ : հակակարկտային 100,0 հազ. դրամ , խմելաջրի խորքային հորի պոմպի վերանորոգման համար 600,0 հազ. դրամ :

Վճարված է աշխատավարձ 5217,0 հազ. դրամ :

Հարգելի համագյուղացիներ ես անձամբ իմ ուժերը ներ եմ դնելու համայնքի ավագանու և գյուղապետարանի աշխատակազմի միջոցով կատարելու ամեն հնարավորը , որպեսի բարելավենք մեր համայնքի բնակիչների սոցիալ տնտեսական վիճակը :



## Բարձրացված հարցեր

1. Չաքարյան Սայադ  
հարց. Վարդանաշեն համայնքում խմելաջրի ջրագծի անցկացման վերաբերյալ:
2. Գևորգյան Արման  
հարց. համայնքի ներսում ոռոգման ցանցի բարելավման ուղղությամբ 3կմ երկարությամբ երկաթբետոնյա կիսախողովակների անցկացում:
3. Չաքարյան Էդիկ  
հարց. Վարդանաշեն համայնքի ակումբի շենքի տանիքի վերանորոգում:
4. Սահակյան Ազատ  
հարց. համայնքում հացահատիկի բարձրարժեք սորտերի պահանջների բավարարում:
5. Եսայան Խաչիկ  
հարց. պարատանյուրի, դիզառելիքի բաշխումը սկսել ոչ թե փետրվար, ապրիլ ամիսներին այլ սեպտեմբեր - հոկտեմբերին, երբ գյուղացին արդեն ապրանք է շուկա հանում:

ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱԾ / Ա. ՍԱՆՈՒԿՅԱՆ /

